ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հուլիսի 2024թ. թիվ 374-Ա

Ա.ԵՂԻՆՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԻՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետով, հիմք ընդունելով «ՀՀ Լոռու մարզի Քարինջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար դիմած հավակնորդի հետ պայմանագրի կնքման մասին 2024 թվականի հունիսի 26-ի արձանագրությունը և ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի մայիսի 31-ի թիվ 292-Ա որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Արամ Սամսոնի Եղինյանին 2024 թվականի հուլիսի 1-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Քարինջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր մինչև 2027 թվականի փետրվարի 1-ը ներառյալ:

2. Ա. Եղինյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

01/07/2024

X

ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. հուլիսի 1
ք.Վանաձոր